

Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2019 թվականի հունվար-հունիսին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները
2019թ. հունվար-հունիսին

	2019թ. հունվար- հունիս	2019թ.հունվար- հունիսը տոկոսներով 2018թ. հունվար- հունիսի նկատմամբ
Տնտեսական ակտիվության ցուցանիշը, տոկոս	x	111.1
Համախառն ներքին արդյունք, մլն դրամ շուկայական գներով	132724.1	109.6
հիմնական գներով՝	126091.8	x
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ), տոկոսներով	x	100.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ	73918.5	130.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլն դրամ	27283.8	99.7
Շինարարության ծավալը, մլն դրամ	27547.7	123.1
Առևտրի շրջանառության ծավալը, մլն դրամ	59513.4	109.0
Ծառայությունների ծավալը, մլն դրամ	35039.1	119.0
Արտաքին առևտրաշրջանառությունը		
հազ. ԱՄՆ դոլար	307253.6	113.5
մլն դրամ	148576.9	x
այդ թվում՝		
արտահանում		
հազ. ԱՄՆ դոլար	130620.5	132.0
մլն դրամ	63110.6	x
ներմուծում		
հազ. ԱՄՆ դոլար	176633.1	102.8
մլն դրամ	85466.3	x
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	168550	106.9
Սպառողական գների ինդեքսը	100.1**	100.6
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը	93.2**	94.3

* Հիմնական գներով ՀՆԱ-ն, ի տարբերություն շուկայական գներով ՀՆԱ-ի, իր մեջ չի ներառում հարկերն ապրանքների վրա, բայց ներառում է սուբսիդիաներն ապրանքների վրա: Հիմնական գներով տվյալները բերված են առանց ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների:

**2019թ. հունիսը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ:

Ապրանքների արտադրության և ծառայությունների փոփոխությունները
 2019թ. հունվար-հունիսին
 (տոկոսներով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)

